Հ. Ճ. Ժ. Կ.

656.202
Հ-99

# ՀՐԱՀԱՆԳ ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

## ԿԱԶՄԻՉԻՆ
ԵՎ
## ԿՑԻՉԻՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹԳԾԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ 1935

14.06.2013

656.203 Կր
2-99
25 SEP 2010

ՀԺԺԿ.
ՎԱԳՈՆԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

1008
38562
3978

# ՀՐԱՀԱՆԳ ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

# ԿԱԶՄԻՉԻՆ ՅԵՎ ԿՑԻՉԻՆ

| | |
|---|---|
| Վ<br>615 | *Ներկա հրահանգը պետք է մտցվի «Յերկաթուղային գործակալներին ձեռնարկներով մատակարարման կանոններում» (բր. 0/198) ըստ կարգի № 642 համարի տակ։* |

*ԼՇԵ—4 ՏՇԶՍ*

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԵՐԿԱԹԳԾԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԹԻՖԼԻՍ 1935

ՊԵՏ. ՀԱՆՐ. ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиотека ՀՍԽՀ-ССР Им. А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

24.468

Թարգմանիչ՝ ՅԵՂԻԳԱՐՅԱՆ
Խմբագիր՝ ՄԵԼԻՔՅԱՆ
Թողարկիչ՝ ՄԻՐԿՈՎԻՉ

Тип. „Заря Востока“ им. А. Ф. Мясникова

Заказ № 2548 Главлит Б—1348 Тираж 300

# ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԳՆԱՑՔՆԵՐԻ ԼՐԻՎ ԱՎՏՈ-ԱՐԳԵԼԱԿՄԱՆ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրաման հաղորդակցության ճանապարհների ժողովրդական Կոմիսարի 1935 թ. 8— հուլիսի № 172/ց:

*Չնայած նրան, որ ՀԾԺԿ-ի պարկում գտնվող վագոնների ընդհանուր քանակից ավտոարգելակային սարքերով սարքավորված է 31 տոկոսը. և մնացած վագոնների ճնշող մեծամասնությունը սարքավորված է միջանցիկ փողերով, ավտոարգելակումը մինչև հիմա չի մտցրած, իսկ սարքված ավտոարգելակները գտնվում են անթույլատրելի խախտված դրության մեջ, նրանցից շատերը գողացված են: Միանգամայն անբավարար է դրված ավտոարգելակների նորոգումը և գնացքների պատրաստումն ուղարկման համար, նորոգման գծերի ստուգումը ...ացրած ոչով չէ կազմակերպված, հրամանատարական կազմը չէ ուսումնասիրել արգելակային գործը և չի ղեկավարում նրան. արգելակների վորակյալ բանվորական ույժի մեծ հոսունություն կա. անհրաժեշտ չի մղվում սիստեմատիկ բնույթ կրող հափշտակումների և ավտոարգելակային սարքավորման փչացման դեմ:*

*Այդպիսի դրությունը հետագայում անհանդուրժելի համարելով և հաշվի առնելով ապրանքատար պարկի լրիվ ավտոարգելակման փոխադրելու. բացառիկ նշանակությունը — վագոնների շրջանառությունն արագացնելու, յերթևեկության անվտանգությունը բարձրացնելու և յերկաթուղիների աշխատանքի ընդհանուր լավացման համար — Հրամայում եմ.*

Յերկաթուղիների պետերին ապրանքատար գնացքները փոխադրել լրիվ ավտոմատիկ արգելակման յերկաթուղիների ամբողջ ցանցում վոչ ուշ, քան 1935 թվի նոյեմբերի 1-ը:

Սահմանել գնացքների լրիվ ավտոարգելակման փոխադրման հետևյալ կարգը և հերթականությունը.

1. 1935 թվի ոգոստոսի 1-ից բոլոր ուղարկվող մարշրուտները հետևյալ յերկաթուղիներով և ուղղություններով.

ա) Դոնեցի, Հարավային և Մ-Կուրսկի Կարմիր Լիման — Մոսկվա — Կուրսկի միջով ուղղությամբ.

բ) Դոնեցի, Հարավային, Արևմտյան, Մ.Բ.Բ. և Հոկտեմբերյան Կարմիր Լիման — Լենինգրադ (Լիմանի. Վորոժբայի և Լգովի միջով).

գ) Յեկատերինսկի և Դոնեցի — Կրիվորոժյե-Դնեպրոպետրովսկ — Դոնբաս.

դ) Հարավային Ուրալսկի, Օմսկի, Տոմսկի-Մագնիտոգորսկ — Կուզբաս և Մագնիտոգորսկ — Կարագանդա (Պետրոպավլովսկի, Օմսկի, Եյխեյի միջով).

յե) Անդրկովկասյան — Բագու — Բաթում.

զ) Հյուս.-Կովկասյան և Ազով-Սևծովյան-Մախաչկալա — Գրոզնի. Գրոզնի — Արմավիր — Տուապսե և Գրոզնի — Նովոռոսիսկ Կավկազսկայայի միջով:

2. 1935 թվի ոգոստոսի 15-ից բոլոր ուղարկվող մարշրուտները հետևյալ յերկաթուղիներով և ուղղություններով.

ա) Հյուսիս — Կովկասյան, Ազովո-Սևծովյան, Հարավ — Արևելյան և Մ-Կազանի — Գրոզնի — Բատայսկ — Մոսկվա (Լիխայա, Կոչետովկայի միջով).

բ) Կիրովի — Կիրովսկ — Մուրմանսկ.

գ) Դոնեցի և Յեկատերինինսկի — Դոնբաս — Զնամենկա (Պյատիխատկայի միջով).



դ) Միջին — Ասիական Կրասնովոդսկից սկսած յերկաթուղու սահմաններում.

յե) Ռյազանո-Ուրալսկի, Մ-Կազանի և Մ-Կուրսկի — Նավթի և ձկան մարշրուտները Սարատովից Մոսկվա (Կոչետովկայի միջով).

զ) Անդրկովկասյան յերկաթուղիների բոլոր գնացքները բացառությամբ հավաքականների և տնտեսականների:

3. Սեպտեմբերի 1-ից բոլոր գնացքները բացի հավաքականների և տնտեսականների, հետևյալ յերկաթուղիներով և ուղղություններով.

ա) Դոնեցի, Յեկատերինինսկի, Հարավային, Կուրսկի, Հար.-Արևմտյան, Արևմտյան, Մ.-Բ.-Բ. Հոկտեմբերյան, Հար.-Արևելյան և Ազով-Սևծովյան Դոնբասից դեպի Մոսկվա, Լենինգրադ, Մարիուպոլ, Խարկով, Ստալինգրադ, Ռոստով, Զնամենկա, Դարնիցա.

բ) Դոնեցի, Յեկատերինինսկի — Կրիվորոժյե, Դնեպրոպետրովսկ, Դոնբաս.

գ) Մարշրուտային գնացքները հետևյալ ուղղություններով. Կիրովսկ — Զվանկա (Կիրովյան յերկաթուղիներ), Ռիբինսկ — Լենինգրադ (Հոկտեմբերյան յերկաթուղիներով).

դ) Պերմսկի, Հյուսիսային, Հոկտեմբերյան Պերմի և Լենինգրադի շրջաններից — որևէ յերկու գնացք:

4. 1935 թվի հոկտեմբերի 1-ից.

ա) Բոլոր գնացքները, բացառությամբ հավաքականների և տնտեսականների հետևյալ ուղղություններով. Ուրալո — Կուզբաս Հար.-Ուրալսկի, Պերմսկի, Օմսկի և Տոմսկի յերկաթուղիներով.

բ) Ուսսուրիսկի յերկաթուղիներից բոլոր դուրս յեկող գնացքները, բացի հավաքականներից.

գ) Հյուսիսային բոլոր մարշրուտային գնացքները Պլեսեցկի շրջանից Մոսկվա.

դ) Որեկան վեց գնացքներ Դոնբասից Բատայսկի Լիսկի — Բալաշովի միջով Հարավ-Արևելյան, Դոնեցի, Մոսկվա — Դոնբաս, Ռյազան-Ուրալսկի և Մ-Կազանի յերկաթուղիներով:

5. Նոյեմբերի 1-ից բոլոր ապրանքատար գնացքները յերկաթուղիների ցանցով բացառությամբ արնտնականների:

6. Ցուցված ուղղությունների մնացած ուղիղ գնացքներում բոլոր յերկաթուղիներում ոգոստոսի 1-ից գնացքի գլխի ավտոարգելակային մասի յերկարությունը, այսինքն արգելակավոր և միջանցիկ վագոնների, պետք է լինի կազմի 30 տոկոսից վոչ պակաս, սեպտեմբերի 1-ից կազմի 50 տոկոսից վոչ պակաս և հոկտեմբերի 1-ից կազմի 75 տոկոսից վոչ պակաս:

II

Ապրանքատար գնացքների անընդհատ ավտոարգելակման դերը ապահովելու համար, յերկաթուղիների պետերի անձնական պատասխանատվությամբ, ինչպես նաև վագոնային, շոգեքարշային, շահագործման սպասարկումների և վագոնանորոգման գործարանների պետերի անձնական պատասխանատվությամբ անցկացնել հետևյալ միջոցառումները.

7. Վերջացնել բոլոր վագոնների սարքավորումը միջանցիկ փողերով մինչև ս. թ. 1 սեպտեմբերի և նույն թվից արգելել յերկաթուղուց յերկաթուղուն ավտոարգելակներով, կամ միջանցիկ փողերով չսարքավորված վագոնների անցթողները: Բոլոր արգելակավոր և միջանցիկ վագոնների վրա կախել պակասող ռետինե բաղումները վոչ ուշ, քան ս. թ. 25 հոկտեմբերի ապահովելով փողերում ազատ անցման մանրակրկիտ ստուգումը, նրանց խտությունը, ամրացումը վագոնին և ծայրի կափույրների ամբողջությունը:



8. Շոգեքարշների սառը լվացումների ժամանակ կազմակերպել ավտոարգելակների և օդային նասոսների ստուգումը և փորձարկումն ապրանքատար պարկի բոլոր գնացքային շոգեքարշների վրա, վերջացնելով այն մինչև ս. թ. 15 ոգոստոսը:

9. Նորոգման կետերում, դեպոներում և գործարաններում վագոնների ամեն տեսակ նորոգության դեպքում լրիվ սարքինության բերել արգելակային սարքավորումը և առանձնապես օդացուցային ցանցը: Յերկաթուղիների պետերին ս. թ. ոգոստոսի 15-ից ապահովել յուրաքանչյուր նորոգման կետի գծերը խտացրած օդով լրիվ մատակարարելը, անհրաժեշտ դեպքերում օգտագործելով շոգեքարշները, և ապահովման յեղանակը հաղորդել մինչև ս. թ. 1 ոգոստոսը ՑՎ-ին, իսկ շոգեքարշներն օգտագործելու դեպքում — ՑՎ-ին և ՑՏ-ին:

Առ 1/VIII բոլոր շոգեքարշային և վագոնային տեղամասերում և նորոգման գործարաններում կազմակերպել զուտ ավտոմատային արհեստանոցներ սեղաններով սարքերի փորձարկման համար և հատուկ գործիքով:

10. Ավտոարգելակների նորոգման և գնացքներն ուղարկման պատրաստելու արտադրական բազայի ուժեղացման համար յերկաթուղիների պետերի ս. թ. 3-րդ կվարտալում ապահովել շինարարության վերջացնելը, հարդարումը և հետևյալ ավտոարգելակային վերահսկիչ կետերի գործարկումը:

Դոնեցի յերկաթուղիներ — Կուպյանսկ, Ռոգանվո Յեկատերինո. Անդրկովկասյան — Գյանջա, Լենինական Հյուս.-Կովկասյան — Մախաչ-Կալա, Դերբենդ, Հանք.-Ջրեր. Ազով-Սևծովյան — Տիխորեցկայա, Կամենոլոմնյա. Հարավ — Արևելյան — Լիսկի, Պովորինո, Գրյազի: Հարավ — Արևմտյան-Կազատին, Դարնիցա, Պոմոշնայա. Հարավային — շողովայա

Ոմնովա. Մոսկվա – Դոնբաս – Ելեց, Ուզլովայա, Վալույկի. Արևմտյան Վորոժբա, Բրյանսկ, Ժլոբին. Բելոր – Բալտիսկի – Սմոլենսկ, Որշա, Վյազմա, Մոսկվա – սորտ. Պոդմոսկովնայա Մ–Կազանի– Մոսկվա–տեսակավ. Բրինսկայա, Ազրեց, Մուռոմ Ա–Կուրսկայա–Օժերելյե, Գորկի Կիրովսկի–Կեմ, Կիրովսկ. Հոկտեմբերյան – Դնո. Հյուսիսային – Մոսկվա–Բուտիրսկայա, Իվանովո Զաբայկալի – Վ–Ուդինսկ, Երոֆեյ Պավլովիչ. Օմսկի Պետրոպավլովսկ, Կարականդա, Բառաբինսկ. Պերմսկի Ն–Տագիլ, Գորոբլագոդատսկայա, Ուսոլիե, Ցանատոլ, Տոմսկի–Նովոկուզնեցկ Եյսկ, Տայգա Աչինսկ. Սիբիրի – Նիժնե-Ուդինսկ, Ամուրսկի – Բոչկարյովո, Սկովորոդինո, Նիկոլսկ – Ուսսուրիյսկ, Սուչան, Խաբարովսկ. Հարավային Ուրալի – Կուրգան, Բերդյաուշ, Ռյազան–Ուրալսկի, Հաշտարխան. Սամարա – Զլատոուստովկայա – Դեմա, Կույբիշև. Թուրքսիբ – Սեմիպալատինսկ:

Բոլոր ավտովերահսկիչ կետերը մատակարարել էլեկտրական ուժով, բացառությամբ հետևյալ կետերի՝ Դերբենտ, Մախաչկալա, Սմոլենսկ, Վորոժբա, Բառաբինսկ, Կուրգան, Պոմոշնայա, Բերդյաուշ, Կեմ, Բոչկարյովո և Սկովորոդինո, վորոնք ապահովել կոմպրեսորներով և ներքին այրման շարժիչներով:

Բացի դրանից, ս. թ. 4-րդ կվարտալում կառուցել և շահագործման դնել վերահսկիչ կետեր Նիկիտովկա, Ունեչա, Տուլա, Բալաշով, Ռտիշչովո, Իսակողորկա, Բելորեչենսկայա, Կեմերովո, Ստալինգրադ և Կարտալի կայարաններում:

11. Երկաթուղիների պետերին, հատկացրած մարկերի հաշվին սարքել լիմիտային աշխատանքների համար, ապահովել անհրաժեշտ աշխատանքների անցկացումը գործող վերահսկիչ կետերի ուժեղացման և



նորոգման գծերի խտացրած ոդով մատակարարման լավացման համար:

12. Երկաթուղիների և մատակարարման բաժինների պետերին՝ գազային խողովակների համար II-րդ և III-րդ կվարտալների առանձնացրած ֆոնդերից, նրանց նշանակումից անկախ, առաջին հերթին և լրիվ կերպով ապահովել պահանջը, վագոնները միջանցիկ փողերով լրացուցիչ կերպով սարքավորելու և ավտոարգելակային վերահսկիչ կետերի և վագոնային տեղամասերի նորոգման գծերի խտացրած ոդակ մատակարարելու համար:

13. Սաժերից, Մոժերեզ, Եքսպերիմենտալնի Կալուժսկի և Կարմիր գծի գործարանների պետերին: Վագոնային կառավարչության կարգադրություններով հանձնել.

ա) Կոմպլեկտային բազուկային միացումներ կռանելի թուջից հետևյալ քանակություններով.

| Ամիսներ | Մշակմամբ | Առանց մշակման |
|---|---|---|
| Հուլիսին . . . . . | 20000 | 12000 |
| Օգոստոսին . . . . . | 31000 | 11000 |
| Սեպտեմբերին . . . . . | 40000 | 13000 |
| Հոկտեմբերին . . . . . | 44500 | 13500 |
| Նոյեմբերին և դեկտեմբերին 55000-ական | | — |
| Ընդամենը | 245500 | 49500 |

բ) Լծակային փոխադրությունների մշակված գլանիկների 330000 հ. մինչև 1/X և 200000 հ. մինչև 1935 թ. 1/XII-ը:

գ) ՑՄՏ-ին անմիջապես սկսել իրենց գործարաններում արգելակային պահեստի մասերի պատրաստելը և 1935 թվի ընթացքում հանձնել վագոնային կառավարչության կարգադրություններով վոչ պակաս, քան 15000 ծայրի ծորակներ, 15000 բացթողի կափարիչներ 5000 «Կ» սերիայի բաշխիչի ներքին մասեր,

30000 կափարիչներ Մատրոսովի արգելակի թեթեվացրած բացթողի:

14. Առանձնացնել գազային մատնաչափային խողովակներ միջանցիկ վագոնների վրա կախելու համար ՑՎ-ի կարգադրով՝ հուլիսին 500 խ. և օգոստոսին 500 խ. ՀԺԺԿ-ի ներքին ֆոնդերի հաշվին:

15. Առանձնացնել լրացուցիչ կերպով վագոնային տնտեսությանը կապիտալներդրումներով ապրանքատար պարկը լրիվ ավտոարգելակման փոխադրման աշխատանքների անցկացման համար 10 վերահսկիչ կետերի կառուցման համար — 700 հազար ռուբլի և կենտրոնացրած պատվերների ծախսերի համար 1700 հազար ռուբլի:

16. Յերկաթուղիների պետերին վերանայել նորոգման և արգելակների սպասարկման բանվորների առկայությունը յուրաքանչյուր վագոնային տեղամասում առանձին և նրանց կազմը կոմպլեկտավորել խական պահանջի սահմաններում 3-րդ կվարտալի համար բաց թողած կոնտինգենտների հաշվին:

17. Ավտոարգելակների վորակյալ կադրերով սպասարկելու համար Ցոպկադրին, ՑՎ-ին և յերկաթուղիների պետերին ապահովել ընթացիկ տարում սովորեցնելու. 10.000 գնացքային յուղիչների, նրանց վերավորակավորելով յուղիչ — ավտոմատչիկների, Ցոպկադր ընկ. Զյորնիին յուղիչների պատրաստման ծախսերի համար հատկացնել 20.000 ռուբլի:

Յերկաթուղիներում անցկացնել ամսական կուրսեր արգելակների նորոգման չոգեքարշային դեպոների բրիգադիրների, դաստիարակ մեքենավարների և ավտոարգելակների հրահանգիչների վորակավորման բարձրացման համար:

Սովորեցնել մինչև ս. թ. 15/IX առանց արտադրությունից կտրելու կազմիչներին, կցիչներին և կոնդուկտորներին, ավտոարգելակներին վերաբերվե–



լուն բազուկների կցման մասում, նրանց կախմանը, ծայրի և ստոպ-ծորակների կոթերի հետ վարվելուն, դրա համար աշխատանքի ներգրավելով վագոնային սպասարկումների տեխնիկական անձնակազմը:

Կայարանների պետերին, վագոնային տեղամասերի ներկայացուցիչների հետ միասին, մինչև 1/X ստուգել այդ աշխատողների պատրաստումը:

Պարտավորեցնել սպասարկումների և տեղամասերի վարչա — տեխնիկական անձնակազմը ուսումնասիրել ավտոարգելակային գործը և քննություն հանձնել տեխմինիմումի ծավալով մինչև ս. թ. 1/X-ը:

Սահմանել, վոր վագոնային և չոգեքարշային տեղամասերի պետերը, նրանց տեղակալները, վարպետները, տեխբյուրոյի աշխատողները և վերստուգիչները, վորոնք մինչև ս. թ. 1/X-ը քննություն չեն հանձնել ավտոարգելակների վերաբերյալ, չեն կարող վարել իրենց պաշտոնները:

Ապահովել գծային և տեխնիկական անձնակազմին ավտոարգելակային գործին սովորեցնելը Մոսկվայի Կենտրոնական կուրսերում. մինչև տարվա վերջը մնացած ժամանակում — վագոնայիններ 150 մ. և չոգեքարշայիններ — 200 մ.:

18. Ավտոարգելակներին սովորեցրած կադրերը պահելու համար, արգելել այդ աշխատողների տեղափոխումը ուրիշ պաշտոնների, վորոնք կապված չեն ավտոարգելակների սպասարկման հետ:

19. Գծային աշխատողների հրահանգումը ավտոարգելակների վերաբերյալ լավացնելու համար յուրաքանչյուր յերկաթուղու վագոնային սպասարկմանը սարքավորել հրահանգող արգելակավոր վագոն:

20. Ավտոարգելակների նորոգման և սպասարկման վորակյալ կադրերի ընտրման և պահման նպատակով. ա) բարձրացնել վագոնային փականագործ

ավտոմատաչիկների վճարման դրույքները միջին հաշվով 20%-ով, չհաշվելով հատուկ սահմանված հավելումները, և բ) յուղիչ-ավտոմատաչիկների վճարումը, որոնք քննությունը հանձնել են, 170 ռուբլու փոխարեն սահմանել ամսական 200 ռուբլի, չհաշվելով հատուկ սահմանված հավելումները:

21. Մտցնել ավտոարգելակների աշխատողների պարգևատրում ավտոարգելակների սարքավորման և նորոգման պլանի կատարման և գերակատարման համար և գնացքներում արգելակների սարքին գործելու համար:

ՑՎ-ին մինչև ս. թ. 15/VII յերկաթուղիներին ուղարկել կանոնադրության պարգևատրման մասին:

22. ՑՎ-ին ընկ. Ռոստովսկուն, ՑՏ-ընկ. Կուբիցինին և Տրանսյերկաթհրատ — ընկ. Պոպովին մշակել և հրատարակել մինչև ս. թ. 1/VIII հրահանգ ավտոարգելակների սպասարկման և նորոգման վերաբերյալ. շոգեքարշային մեքենավարին և նրա օգնականին, ուղեկցողին, կոնդուկտորին, յուղիչ-ավտոմատաչիկին և յուղիչին. գնացքի պետին:

23. Այն կապակցությամբ, որ լրիվ ավտոարգելակման փոխադրվելու գործում բացառիկ նշանակություն ունի գնացքների ճիշտ կազմելը, իսկ յերկաթուղիների մեծամասնության մեջ մինչև հիմա այդ բնագավառում բացակայում է ելեմենտար կարգապահությունը — գնացքները, որոնք անկանոն կերպով ընտրված ավտոարգելակավոր և միջանցիկ վագոններով են կազմած մեկ յերկաթուղուց մյուսին փոխադրելիս համարել անկանոն կազմված և ս. թ. օգոստոսի 15-ից խոտանման յենթակա:

ՑԴ-ի և ՑՎ-ի 1934 թ. 10/IV-ի № 6614 հեռագիրը, որը թույլ եր տալիս միջանցիկ վագոնները չընտրել — վերացնել: Ապրանքատար գնացքները ավտոարգելակներով ուղարկելիս շոգեքարշները մատուցել կետերում, որոնք ունեն կայարանային կոմպրեսորային սարքավորումներ և օդատար ցանց, 10 րոպե առաջ, իսկ կայարանային ցանց չունեցող կետերում — ուղարկելուց 20 րոպե առաջ:

24. Այն կապակցությամբ, որ բազուկների հափշտակման և բազուկների ու ուրիշ արգելակային մասերի փչացման դեմ յերկաթուղիներում հարկ յեղած պայքարը չի մղվում, իսկ այդ հափշտակումները ձախողում են լրիվ ավտոարգելակման անցնելուն, յերկաթուղիների պետերին և քաղբաժիններին կազմակերպել վճռական պայքար այդ հափշտակումների դեմ, որպես վնասարարական ակտերի և խորտակումներ կազմակերպելու դեմ, անմիջապես մեղավորներին դատական պատասխանատվության յենթարկելով:

25. Յերկաթուղիները սխեմատիկորեն հրահանգելու համար լրիվ ավտոարգելակման փոխադրման և ներկա հրամանի կատարման վերահսկման համար սահմանել ժամանակավորապես մինչև նոյեմբերի 1-ը ՑՎ-ին կից ավտոարգելակումների տեսուչ-հրահանգիչների հատուկ խումբ 10 հոգուց բաղկացած:

26. Ներկա հրամանի կենսագործման համար անձնական պատասխանատվությունը դրվում է վագոնային սպասարկումների պետերի վրա:

Յերկաթուղիների պետերին ստուգել լրիվ ավտոարգելակման փոխադրելու աշխատանքի ընթացքը և ամեն ամիս զեկուցել ինձ իր ստորագրությամբ աշխատանքի ընթացքի մասին:

III.

Պարզում եմ, որ ներկա ավտոարգելակային տնտեսության միանգամայն անբավարար դրությունը պատահական չէ և որ նա հետևանք է յերկաթուղիների կողմից միանգամայն արհամարհական վերաբերմունքի դեպի վագոնային տնտեսությունը: Յերկաթուղիները դեռ ևս յելնում են նրանից, որ վագոնները նրանց չեն պատկանում, ուստի չեն զբաղվում վագոնների նորոգությամբ, փաստորեն թույլ տալով նրանց քայքայումն:

Յերկաթուղիների պետերից պահանջում եմ ներկա հրամանի լրիվ և ճշտորեն կատարումը ավտոարգելակման մասին և իր վագոնային ամբողջ տնտեսության արմատական լավացումը:

Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսար՝ *Լ. ԿԱԳԱՆՈՎԻՉ*

---

Հաղորդակցության ճանապարհների Կոմիսարի համաձայնությամբ հաստատում եմ՝

Վագոնային տնտեսության Կենտրոնական Կառավարչության պետ՝

Մ. Գ. ՈՍՏՐՈՎՍԿԻ

31 հունվարի 1935 թ.

# ՀՐԱՀԱՆԳ

## ԱՎՏՈԱՐԳԵԼԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱԶՄԻՉԻՆ ՅԵՎ ԿՑԻՉԻՆ

(«Ավտոմատիկ արգելակները մարդատար և ապրանքատար գնացքներում պահման և գործադրման կանոնների») վերացումով (ԲՐ Տ/273. 1930 թ.) գնացքների կազմիչների և կցիչների հրահանգի մասում (հավելված 6)

§ 1. Գնացքների կազմիչը, կամ վագոնների կցիչը կազմը մանևրաների համար պատրաստելիս պարտավոր է կցման սարքերի զատումից առաջ (պատրաստումն մանևրաների համար) փակել յերկու վագոնների ծայրի ծորակները, բաժանել միացնող բաղուկները և անպայման նրանց կախել կախոցների վրա (նկ. 1): Բաղուկները բռնակի (поручень) հետևը անցկացնելիս (նկար 2), կամ նրանց առանց կախելու թողնելն արգելվում է:

§ 2. Ավտոարգելակներով ժամանած գնացքների կազմերը մինչև նրանց կազմատման սկիզբը (մինչև նրանց հետ մանևրաներ կատարելը), ինքնաարգելա-



Նկ. 1. Ծայրի ծորակը փակ է բազուկը կախոցի վրա է։



կողմից խուսափելու համար պետք է պարպած լինեն (օդից ազատված լինեն)։

Դրա համար կցիչը, կամ գնացքների կազմիչը ծայրի ծորակի միջով մագիստրալից օդը բաց է թողնում։



Նկ. 2. Անկանոն դրություն—Բազուկը բռնակի հետևը անցկացնելիս կոտրված է։

Գահեստի ռեզերվուարներից և արգելակող գլաններից օդը բաց է թողնվում (վագոնի յերկու կողմից դուրս հանված) դուրս թողնման կափարիչի միջով, ձգելով մետաղալարից (ПОВОДОК)։

§ 3. Բազուկների միացումը կազմվող կազմերում կատարվում է, փականագործ – ավտոմատչիկների ձեռքով։ Բազուկների միացումը միջանկյալ կայարաններում, վագոնային սպասարկման աշխատանք–

1008/38562
3978
ՀՍԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Публ. Библиоте ՀՍԽՀ-ССР им. А. Мясникян

ների (յուղիչների, փականագործ – ավտոմատչիկնե-րի) բացակայության դեպքում, կատարում է կազմիչը, կամ կցիչը:

§ 4 Ռետինե միացնող բաղուկների կցման համար (նկար 3)· անհրաժեշտ է նախորոք զննել գլխիկները, նրանց մաքրել ցեխից և կեղտից, անսարք խըտացնող ողակները փոխարինել, իսկ նրանց բացակա-



Նկ. 3. Բաղուկների կանոնավոր կցումը:

յության դեպքում տեղը դնել նորերը: Միացվող գլխիկները պտտել մինչև դեմ առնելը: Կցելուց հետո բանալ ծայրի ծորակները (ծայրի ծորակների կոթերը դնել խողովակի յերկարությամբ):

Բաղուկների միացումը կատարել միայն վագոնների կցումից հետո, գնդյա մեկ մոտքաշով, իսկ ավտոկցումով սարքավորված վագոնների դեպքում միայն



յերկու վագոնների ավտոկցման գլխիկների կցման դեպքում:

§ 5· Շոգեքարշը գնացքին կցելու անհրաժեշտ է նախորոք հողմահարել տենդերի միացնող բաղուկը (նկար 4) ծայրի ծորակի կոթերը յերկու, կամ յերեք անգամ պտտելով խողովակի յերկարությամբ, որից



Նկ. 4. Ոդացույցի խողովակի հողմահարումը

հետո ծորակը փակվում է, կատարվում է բաղուկների կցումն և ծայրի ծորակների կոթերը դրվում են բաց դրությամբ (խողովակի յերկարությամբ):

§ 6· Գնացքների կազմիչը և վագոնների կցիչը իրենց աշխատանքի ժամանակ պարտավոր են հսկելու արգելակային սարքավորման բոլոր մասերի ամբողջությունը և ապահով պահպանմանը, և մանավանդ վագոնների վրայի ռետինե բաղուկներին, իսկ բա-

*գուլների յուրաքանչյուր պատման դեպքում թույլ չը-տալ միջնադիրային օղակների կորցնելը։*

Վագոնային տնտեսության Կենտրոնական կառավարչության գլխավոր ճարտարապետ՝
**ԱԿՍՅՈՆՈՎ**

Ավտոարգելակների սեկտորի պետ՝ *ԳՐԻՆՇՏԵՅՆ*

---

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библиоте
ՀՍԽՀ-ССР
Им. А. Мясникян
Ա. Մյասնիկյանի անվան



ՀՀ Ազգային գրադարան
NL0299331

24.468

9 Բ Ի

964

# Инструкция по автотормозам

# СОСТАВИТЕЛЮ
# И
# СЦЕПЩИКУ

Изд. Зак. жел. дор.